



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

29.01.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/108

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի
դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.05665),

«Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Ս. Աղաջանյանի (լիազորագիր տրված՝ 14.01.2021թ.),

«Լեյկո» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Ա. Ալեքսանյանի (լիազորագիր տրված՝ 22.01.2021թ.),

քննելով «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ. ներկայացված (30.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/108 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 29.12.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ն բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1 որոշմամբ, որի Հրավերով պահանջվում են թվով 91 ապրանքներ:

2020թ. դեկտեմբերի 22-ին կայացած բացման նիստի թիվ 2-րդ արձանագրության թիվ 3.1 կետով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է ընդունվել, որ՝ «3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը (հայտերում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան», թիվ 4.1 կետով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է ընդունվել, որ՝ «4.1. Մասնակիցների գնային առաջարկները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան», իսկ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացրել են հավելված 1-ում:

2020թ. դեկտեմբերի 24-ին «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից դիմում է հղվել մրցույթի գնահատող հանձնաժողովին առ այն, որ որոշ մասնակիցների կողմից կողմից Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված գնային առաջարկներում հաշվարկված և ներառված են ԱԱՀ-ի մեծությունները, որոնք չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին՝ այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը:

Դիմումով «Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել էր մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումներով, ստուգել ներկայացված փաստերի և իրավական ակտերի հավաստիությունը, որոնք հիմք կհանդիսանան Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով մրցույթի որոշ մասնակիցների կողմից գնային առաջարկներում առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափի հաշվարկված լինելը որակել որպես իրականությանը չհամապատասխանող, և մերժել

մրցույթի այդ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով:

2020թ. դեկտեմբերի 25-ին կայացած նիստում մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից հայտարարություն է հրապարակվել պայմանագիր կնքելու որոշման մասին, որում արձանագրվել է, որ. «2020 թվականի դեկտեմբերի 25-ին հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները», այդ թվում նաև՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.12.2020թ. հղված դիմումում նշված Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2-րդ նիստի թիվ 3.1 կետով հաստատված «3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը (հայտերում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան», թիվ 4.1 կետով հաստատված «4.1. Մասնակիցների գնային առաջարկները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան» և 2020թ. դեկտեմբերի 25-ի Հայտարարությունում արձանագրված՝ «Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 25-ին հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները» որոշումները Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ չեղյալ հայտարարելու «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2020թ. դեկտեմբերի 22-ի թիվ 2-րդ նիստի թիվ 3.1 կետով հաստատված «3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը (հայտերում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան», թիվ 4.1 կետով հաստատված «4.1. Մասնակիցների գնային

առաջարկները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան» և 2020թ. դեկտեմբերի 25-ի Հայտարարությունում արձանագրված՝ «Գնահատող հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 25-ին հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները» որոշումները՝ Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 4-րդ հոդվածի՝

Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:.....», որոնցից սույն բողոքին առնչվում են հետևյալ իրավական ակտերը՝

1) Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 12, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները՝

ա) Համաձայն «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ»-ի (ԱՏԳ ԱԱ) դասակարգման՝ դասակարգված են 9018 ծածկագրին պատկանող՝ «9018 Բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործվող սարքեր եւ սարքվածքներ՝ ներառյալ սցինտիգրաֆիկական ապարատուրաները, էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ եւ տեսողությունը հետազոտելու սարքեր», ծածկագրերով:

բ) Համաձայն «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ Օրենքի հոդված 1-ով հաստատված ցանկի՝ 9018 ԱՏԳ ԱԱ ծածկագրին պատկանող ապրանքները՝ «9018 Սարքեր և հարմարանքներ՝ բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ կիրառվող (ներառյալ՝ սցինտիգրաֆիկական ապարատները), էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ և սարքեր՝ տեսողությունը հետազոտելու համար»,

ՀՀ տարածք ներմուծման ժամանակ ազատված են ԱԱՀ վճարելուց:

գ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 5-րդ կետի 1-ին մասի՝

«Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան»:

դ) Համաձայն «Ավելացված Արժեքի Հարկի Մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

2) Հրավերի թիվ 13 և 50-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները՝

ա) Համաձայն «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ»-ի (ԱՏԳ ԱԱ) դասակարգման՝ 3005 ծածկագրին պատկանող՝ «3005 Բամբակ, թանզիֆ, փաթույթային վիրակապեր եւ նմանատիպ արտադրատեսակներ (օրինակ՝ վիրակապական նյութեր, կաչուն սպեղանիներ, թրջոցալաթեր)՝ ներծծված կամ ծածկված դեղագործական նյութերով կամ մանրաձախ վաճառքի համար բաժնեծրարված տարաներում կամ փաթեթվածքներում, որոնք նախատեսված են բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ օգտագործելու համար», ծածկագրերով:

բ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 3-րդ կետի 1-ին մասի՝

«3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին»:

գ) Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

3) Հրավերի թիվ 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքները՝

ա) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդին կից «Բժշկական նշանակության ապրանքների ցանկ»-ի թիվ 31-րդ և 32-րդ կետերի՝

31. Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ

32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ, անվանումներով ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում:

բ) Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

4) Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով գնահատող հանձնաժողովի անգործությունը՝

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման թիվ 67 կետի սահմանումների՝ «Գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է»:

«ԱԲԾԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը չի իրականացրել օրենսդրությամբ իրեն ընձեռնված՝ մասնակիցների ներկայացրած տվյալների ստուգմանը ուղղված հնարավորությունը, որի արդյունքում որոշ մասնակիցների կողմից Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ

չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված գնային առաջարկներում հաշվարկված և ներառված ԱԱՀ-ի մեծությունները, որոնք չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, պետք է որակվեին որպես իրականությանը չհամապատասխանող, իսկ այդ մասնակիցների հայտերը մերժվեին տվյալ չափաբաժինների մասով:

Տվյալ չափաբաժինների մասերով բազմաթիվ առաջարկներ կան մրցույթի այլ մասնակիցների կողմից ևս, որոնք սակայն իրենց գնային առաջարկներում չեն հաշվարկել ԱԱՀ-ի մեծությունները և չեն ներառեն դրանք ապրանքի գնի մեջ՝ պահպանելով ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջները:

Վերոգրյալ փաստաթղթերը աներկբա կերպով ապացուցում են, որ «ԱԲԾԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի որոշ մասնակիցների կողմից Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված գնային առաջարկներում ԱԱՀ-ի հաշվարկելը և ներկայացնելը չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը»:

Ի լրումն բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 29.12.2020թ. բողոքի և ի պատասխան 2021թ. հունվարի 15-ին կայացած բողոքի քննության նիստում Ձեր կողմից բարձրացված հարցերի ու Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերի հայտնում ենք հետևյալը՝

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոքարկվում են «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի այն որոշումները, որոնք վերաբերվում են Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար որոշ մասնակիցների կողմից ներկայացված այն գնային առաջարկներին, որտեղ առանձին տողով հաշվարկված և ներառված են ԱԱՀ-ի մեծությունները, որոնց ներառելը գնային առաջարկներում չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին, այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը:

Պատվիրատուի կողմից բողոքի վերաբերյալ իրենց դիրքորոշումները և բողոքի պահանջների վերաբերյալ իրենց առարկությունները գրավոր կերպով չեն ներկայացվել

Ձեր քննությանը՝ ինչպես 15.01.2021թ. կայացած բողոքի քննության նիստում, այնպես էլ մինչև օրս՝ 20.01.2021թ., ինչը նշանակում է, որ Պատվիրատուն համաձայն է բողոքի պահանջներին:

Պատվիրատուն իր գրավոր դիրքորոշումների փոխարեն Ձեզ է տրամադրել բողոքարկվող չափաբաժիններում առանձին տողով ԱԱՀ-ի մեծություններ հաշվարկած՝ թվով 3 մասնակիցներից, միայն մեկի՝ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրություններն ու փաստաթղթերը, որոնք սակայն առընչվում են միայն բողոքում ընդգրկված թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12 և 13-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքներին:

«Լեյկո» ՍՊԸ-ի կողմից առարկություններ չեն հայտնվել բողոքարկվող թիվ 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար, ինչը նշանակում է, որ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ընդունվում են մեր բողոքի փաստարկներն ու պահանջները Հրավերի թիվ 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով, ուստի կանդիդատնանք միայն Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12 և 13-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրություններին և փաստաթղթերին:

1) Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5 և 12-րդ չափաբաժիններ՝

տարբեր չափսերի ներարկիչներ, թիվ 7-րդ չափաբաժին՝ փոխներարկման համակարգ:

ա) Համաձայն ՀՀ կողմից 2016թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) թիվ 101 որոշումով հաստատված՝ «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ»-ի (ԱՏԳ ԱԱ) և «Միասնական Մաքսային Տարիֆների»-ի (ՄՄՏ) Հավելվածի (որի ռուսերեն և հայերեն տարբերակները Ձեզ ենք փոխանցում էլեկտրոնային եղանակով՝ նրանց մեծածավալ լինելու պատճառով) թիվ 1406 և 1407 էջերում ներարկիչները դասակարգվում են 9018 դիրքում գտնվող 9018 31, 9018 31100 - 9018 31900 9 ծածկագրերով, թիվ 1408 էջում՝ փոխներարկման համակարգերը դասակարգված են 9018 դիրքում գտնվող 9018 90 500 1 ծածկագրով:

Ձեզ ենք ներկայացնում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 14.03.2019թ. ՀՀ տարածք ներմուծված մի շարք ապրանքների մաքսային հայտարարագիրը, որի 5-րդ էջում ներարկիչները մաքսազերծված են 9018 31 900 9 ծածկագրով, իսկ 7-րդ էջում ինֆուզիոն

և արյան փոխներարկման համակարգերը մաքսագերծված են 9018 90 500 1 ծածկագրով: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն փաստի վրա, որ այդ 2 ապրանքների համար էլ որպես մաքսագերծման վճարման հաշվարկ նշված է «2010» ծածկագրով հարկատեսակը, որի համար գրված է 5 տոկոս դրույքաչափը:

բ) Համաձայն «Մաքսային հայտարարագրերը լրացնելու համար օգտագործվող դասակարգիչների մասին» Մաքսային Միության Հանձնաժողովի 2010թ. սեպտեմբերի 20-ի թիվ 138 որոշման Հավելված թիվ 9-ի՝ «2010» դասակարգիչը վերաբերվում է «վճարվող ներմուծման մաքսատուրքեր» հարկատեսակին, որի դրույքաչափերի մեծության հաշվարկի տոկոսները ՀՀ ներմուծվող տարբեր ապրանքների համար տարբեր են լինում և սահմանված են ԵԱՏՄ թիվ 101 որոշումով հաստատված՝ ԱՏԳ ԱԱ-ի Հավելվածի համապատասխան սյունակներում, որտեղ ներարկիչների 9018 31 ծածկագրերով և փոխներարկման համակարգերի 9018 90 500 1 ծածկագրով սահմանված են 5 - 7 տոկոս դրույքաչափեր:

«Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից Ձեզ էին ներկայացվել «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018 և 27.08.2020թթ. ՀՀ տարածք ներմուծած տարբեր չափսերի ներարկիչների և լուծույթների փոխներարկման համար նախատեսված ինֆուզիոն համակարգերի ներմուծման հայտարարագրերը, որտեղ թիվ 47՝ «Վճարումների հաշվարկ» կետի «Տեսակ» սյունակում նշված է «2010» ծածկագրով հարկատեսակը, որի դրույքաչափը գրված է 5 տոկոս, որոնք ապացուցում են, որ այդ ապրանքների մաքսագերծման ժամանակ վճարվել է 5 տոկոս «Մաքսատուրք» հարկատեսակը, այլ ոչ թե «ԱԱՀ» հարկատեսակը:

գ) Համաձայն «Մաքսային հայտարարագրերը լրացնելու համար օգտագործվող դասակարգիչների մասին» Մաքսային Միության Հանձնաժողովի 2010թ. սեպտեմբերի 20-ի թիվ 138 որոշման Հավելված թիվ 9-ի՝ «ԱԱՀ» հարկատեսակի համար սահմանված է «5010» ծածկագրով դասակարգիչը:

Համաձայն ՀՀ հարկային Օրենսգրքի թիվ 63-րդ հոդվածի 1-ին մասի սահմանման՝

Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, բացառությամբ Օրենսգրքի 64-րդ և 65-րդ հոդվածներով սահմանված գործարքների ու գործառնությունների»:

Այսինքն՝ «ԱԱՀ» հարկատեսակը ունի կոնկրետ «5010» ծածկագիրը, որի դրույքաչափը ՀՀ-ում միայն կոնկրետ 20 տոկոս է, ինչը նշանակում է, որ ներկայացված «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի հայտարարագրերի թիվ 47՝ «Վճարումների հաշվարկ» կետի «Տեսակ» սյունակում առկա «2010» ծածկագրով հարկատեսակը, որի դրույքաչափը գրված է 5 տոկոս, չի կարող վերաբերվել «ԱԱՀ» հարկատեսակին՝ անկախ այն հանգամանքից, որ այդ հայտարարագրումները կատարվել են ոչ թե 9018 դիրքում գտնվող ծածկագրերով, այլ 4818 դիրքում գտնվող 90 10000 ծածկագրով, ինչպես որ փորձում են ապացուցել «Լեյկո» ՍՊԸ-ի գրությունով, քանի որ ՀՀ տարածք ներմուծած տարբեր տեսակի ներարկիչների և փոխներարկման համակարգերի համար հայտարարագրերի թիվ 47՝ «Վճարումների հաշվարկ» կետի «Տեսակ» սյունակում հաշվարկվում են միայն «2010» ծածկագրով «Մաքսատուրք» հարկատեսակի դրույքաչափերը, այդ ապրանքների համար հայտարարագրերի թիվ 47՝ «Վճարումների հաշվարկ» կետի «Տեսակ» սյունակում «5010» ծածկագրով «ԱԱՀ» հարկատեսակի 20 տոկոսանոց դրույքաչափերով գումար չի հաշվարկվում Մաքսային մարմինների կողմից, այդ ապրանքների համար ոչ մի ներմուծող՝ այդ թվում նաև «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն, «5010» ծածկագրով «ԱԱՀ» հարկատեսակի 20 տոկոս դրույքաչափով վճարումներ չի կատարում:

Այսինքն՝ Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7 և 12-րդ չափաբաժինների մասերով պահանջվող տարբեր չափսերի ներարկիչների և փոխներարկման համակարգերի ներմուծումը ՀՀ տարածք ազատված է «ԱԱՀ» հարկատեսակի վճարումից՝ անկախ այդ ապրանքների ներմուծման հայտարարագրերում գրվող ԱՏԳ ԱԱ ծածկագրերից, ուստի տարբեր չափսերի ներարկիչները և փոխներարկման համակարգերը ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար «ԱԱՀ» հարկատեսակ հաշվարկել:

2) Հրավերի թիվ 9, 10 և 11-րդ չափաբաժիններ՝

Ձեռնոցներ՝ վիրաբուժական, ոչ ախտահանված լատեքս և ոչ ախտահանված նիտրիլ:

ա) Համաձայն ԵԱՏՄ թիվ 101 որոշումով հաստատված ԱՏԳ ԱԱ-ի Հավելվածի՝ թիվ 601 էջում առկա տվյալների, «ռետինե ձեռնոցներ»-ը դասակարգվում են 4015 դիրքում գտնվող 4015 11000 0 (վիրաբուժական, այսինքն՝ ստերիլ ձեռնոցներ լատեքսից) և 4015 19000 0 (այլ, այսինքն՝ ոչ ստերիլ անատոմիական ձեռնոցներ լատեքսից, նիտրիլից և այլն) ծածկագրերով:

«Լեյկո» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից Ձեզ էին ներկայացվել «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի կողմից 21.02.2019թ. ներմուծման հայտարարագիրը, համաձայն որի՝ 4015 դիրքում

գտնվող 19000 0 ծածկագրով մաքսագերծվել է «Մեկանգամվա օգտագործման ռետինե ձեռնոցներ՝ ոչ ստերիլ» անվանումով ապրանքը:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ 14.03.2019թ. ՀՀ տարածք ներմուծված մի շարք ապրանքների մաքսային հայտարարագրի 4-րդ էջում 4015 դիրքում գտնվող 11000 0 ծածկագրով մաքսագերծվել է «Վիրաբուժական ձեռնոցներ՝ լատեքսից / ստերիլ» անվանումով ապրանքը:

Այդ 2 հայտարարագրերում էլ՝ ներմուծված ստերիլ և ոչ ստերիլ «ռետինե ձեռնոցներ» անվանումներով ապրանքների համար թիվ 47՝ «Վճարումների հաշվարկ» կետի «Տեսակ» սյունակում գրված է ինչպես «2010» ծածկագրով «Մաքսատուրք» հարկատեսակը, որի դրույքաչափը գրված է 9 և 10 տոկոս, այնպես էլ «5010» ծածկագրով «ԱԱՀ» հարկատեսակը, որի դրույքաչափը գրված է 20 տոկոս:

բ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդին կից «Բժշկական նշանակության ապրանքների ցանկ»-ի թիվ 31-րդ և 32-րդ կետերի՝

31. Տարբեր չափի ռետինե անատոմիական ձեռնոցներ

32. Տարբեր չափի ռետինե վիրաբուժական ձեռնոցներ,

անվանումներով ապրանքները ընդգրկված են ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության նպատակով ԱԱՀ-ից ազատված ապրանքների ցանկում:

գ) Համաձայն «Ավելացված Արժեքի Հարկի Մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

Վերոգրյալ իրավական ակտերի սահմանումներից ելնելով՝ ՀՀ տարածք ներմուծված ստերիլ և ոչ ստերիլ «Ռետինե ձեռնոցներ»-ի համար բոլոր ներմուծողները պարտավոր են մաքսային հայտարարագրերով կատարված բոլոր հարկատեսակների վճարումները ներառել ներմուծվող «Ռետինե ձեռնոցներ»-ի ինքնարժեքի մեջ, որպեսզի ՀՀ տարածքում «Ռետինե ձեռնոցներ»-ի իրացման ժամանակ «ԱԱՀ»-ի հարկատեսակ չհաշվարկեն:

Այսինքն՝ Հրավերի թիվ 9, 10 և 11-րդ չափաբաժինների մասերով պահանջվող տարբեր տեսակի ստերիլ և ոչ ստերիլ «Ռետինե ձեռնոցներ»-ը ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար «ԱԱՀ» հարկատեսակ հաշվարկել:

3) Հրավերի թիվ 13-րդ չափաբաժին՝ Թանգիֆ

ա) «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ին հասցեագրված գրության մեջ գրված է՝ «4. Բժշկական թանգիֆ՝ 52082110000», այսինքն՝ «Թանգիֆ» անվանումով ապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագիրը նրանք համարում են «52082110000» թվերը, որն ապացուցելու նպատակով ներկայացրել են «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի 27.08.2020թ. հայտարարագիրը, որտեղ «Ապրանքի ծածկագիրը» թիվ 33-րդ կետում առկա է իրենց գրած «52082110000» թվերով ծածկագիրը, որն ըստ «Լեյկո» ՍՊԸ-ի գրության՝ վերաբերվում է «Բժշկական թանգիֆ»-ին, ինչը իրականությանը չի համապատասխանում, քանի որ հենց իրենց կողմից ներկայացված հայտարարագրում, հենց իրենց կողմից նշված «52082110000» թվերով ծածկագրին վերաբերվող ապրանքի համար հայտարարագրի «Փաթեթ. և ապր-ների նկարագր.» թիվ 31-րդ կետում որպես ներմուծվող ապրանքի անվանում գրված է՝ «1) - - - գործվածքներ բինտերի, վիրակապական նյութերի և բժշկական թանգիֆի պատրաստման համար, 100 % բամբակե գործվածք, գլանափաթեթներով՝ սպիտակեցված, մինչև 100 Գ/Մ խտությամբ, բինտերի արտադրության համար», որը համապատասխանում է ԱՏԳ ԱԱ-ի Հավելվածի՝ թիվ 743 էջում առկա՝ 5208 դիրքում գտնվող 210000 ծածկագրով ապրանքի համար գրվածներին՝ «Բամբակե գործվածքներ...բինտերի, վիրակապական նյութերի և բժշկական թանգիֆի պատրաստման համար...»:

Այսինքն՝ «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ԱՏԳ ԱԱ-ի թիվ «52082110000» ծածկագիրը որպես «Թանգիֆ» անվանումով ապրանքի ծածկագիր ներկայացնելը չի համապատասխանում իրականությանը:

բ) Համաձայն ԵԱՏՄ թիվ 101 որոշումով հաստատված ԱՏԳ ԱԱ-ի Հավելվածի՝ թիվ 490 էջում առկա տվյալների, «Թանգիֆ» անվանումով ապրանքը դասակարգվում է 3005 դիրքում գտնվող 90 310 0 (----թանգիֆ և թանգիֆից արտադրատեսակներ) ծածկագրով:

գ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 3-րդ կետի 1-ին մասի՝

«3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝

դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին»:

դ) Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

Վերոգրյալ իրավական ակտերի սահմանումներից ելնելով՝ ՀՀ տարածք ներմուծված «թանգիֆ և թանգիֆից արտադրատեսակներ»-ի համար բոլոր ներմուծողները պարտավոր են մաքսային հայտարարագրերով կատարված բոլոր հարկատեսակների վճարումները ներառել ներմուծվող «թանգիֆ և թանգիֆից արտադրատեսակներ»-ի ինքնարժեքի մեջ, որպեսզի ՀՀ տարածքում <<Թանգիֆ և թանգիֆից արտադրատեսակներ»-ի իրացման ժամանակ «ԱԱՀ»-ի հարկատեսակ չհաշվարկեն:

Այսինքն՝ Հրավերի թիվ 13-րդ չափաբաժնի մասով «Թանգիֆ» անվանումով ապրանքը ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար «ԱԱՀ» հարկատեսակ հաշվարկել:

Որպես «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի լրացուցիչ փաստացի և իրավական հիմքեր ու ապացույցներ, Ձեզ եմ ներկայացնում՝

1) ՀՀ ՊՆ-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 11-ին կայացած թիվ 3 նիստի արձանագրությունը, համաձայն որի՝ այդ ընթացակարգին մասնակցած «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից առաջարկված՝

թիվ 25 չափաբաժին – Արյան փոխներարկման համակարգ/ինֆուզիոն/,

թիվ 26 չափաբաժին - Ներարկիչ մ/ն 5 մլ ասեղով, և

թիվ 79 չափաբաժին - Թանգիֆ բժշկական

անվանումներով ապրանքների համար գնային առաջարկում առանձին տողով «ԱԱՀ» հարկատեսակ չի հաշվարկվել, ի տարբերություն բողոքարկվող Հրավերի համանման ապրանքների:

2) «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի «ՍԱԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/2» ծածկագրով մրցույթին 2021թ. հունվարի 15-ին «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից առաջարկված՝

թիվ 160 չափաբաժին - Ներարկիչ 1 մլ 30G, հատ, և

թիվ 162 չափաբաժին - Ներարկիչ 20 մլ G-21, հատ

անվանումներով ներարկիչների համար գնային առաջարկում առանձին տողով «ԱԱՀ» հարկատեսակ չի հաշվարկվել, ի տարբերություն բողոքարկվող Հրավերի համանման ապրանքների»:

Ի լրումն բողոքի՝ 26.01.2021թ. գրությամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 29.12.2020թ. բողոքի և ի պատասխան 2021թ. հունվարի 22-ին կայացած բողոքի քննության նիստում Ձեր կողմից բարձրացված հարցերի՝ Հրավերի թիվ 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով, հայտնում ենք հետևյալը՝

1) Հրավերի թիվ 50-րդ չափաբաժին՝ «Սպեղանի կտորից»

ա) Համաձայն ՀՀ կողմից 2016թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած Եվրասիական Տնտեսական Միության (ԵԱՏՄ) թիվ 101 որոշումով հաստատված՝ «Արտաքին Տնտեսական Գործունեության Ապրանքների միասնական Անվանացանկ»-ի (ԱՏԳ ԱԱ) և «Միասնական Մաքսային Տարիֆների»-ի (ՄՄՏ) Հավելվածի (որի ռուսերեն և հայերեն տարբերակները Ձեզ ենք փոխանցում էլեկտրոնային եղանակով՝ նրանց մեծածավալ լինելու պատճառով) թիվ 490 էջում առկա տվյալների, «Սպեղանի կտորից» անվանումով ապրանքը դասակարգվում է 3005 դիրքում (...կաչուն սպեղանիներ, ...) գտնվող 10 0000 (-վիրակապական հարակցանյութ և կաչուն շերտ ունեցող այլ արտադրատեսակներ) ծածկագրով:

բ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Աավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 3-րդ կետի 1-ին մասի՝

«3. Բժշկական նշանակության ապրանքները՝ ախտորոշման, կանխարգելման, բուժման, անզգայացման ժամանակ օգտագործվող այն բժշկական նշանակության ապրանքներն են, որոնք՝ դասվում են Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 3005, 3006, 3701 10, 3702 10, 3707 90, 4014, 5601 21, 5601 22 ծածկագրերին»:

գ) Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

Վերոգրյալ իրավական ակտերի սահմանումներից ելնելով՝ ՀՀ տարածք ներմուծված «կաչուն սպեղանիներ, ... վիրակապական հարակցանյութ եւ կաչուն շերտ ունեցող այլ արտադրատեսակներ»-ի համար բոլոր ներմուծողները պարտավոր են մաքսային

հայտարարագրերով կատարված բոլոր հարկատեսակների -2՝ վճարումները ներառել ներմուծվող <<կաշուն սպեղանիներ, ... վիրակապական հարակցանյութ եւ կաշուն շերտ ունեցող այլ արտադրատեսակներ>>-ի ինքնարժեքի մեջ, որպեսզի ՀՀ տարածքում <<կաշուն սպեղանիներ, ... վիրակապական հարակցանյութ եւ կաշուն շերտ ունեցող այլ արտադրատեսակներ>>-ի իրացման ժամանակ «ԱԱՀ» -ի հարկատեսակ չհաշվարկեն:

Այսինքն՝ Հրավերի թիվ 50-րդ չափաբաժնի մասով «Սպեղանի կտորից» անվանումով ապրանքը ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար «ԱԱՀ» հարկատեսակ հաշվարկել:

2) Հրավերի թիվ 79-րդ և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքներ՝ «Հայելի գինեկոլոգիական» և «Ֆոլկմանի գդալ»

ա) «Հայելի գինեկոլոգիական» և «Ֆոլկմանի գդալ» անվանումներով ապրանքները ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա ապրանքներ են, որոնք համաձայն ԵԱՏՄ թիվ 101 որոշումով հաստատված ԱՏԳ ԱԱ-ի Հավելվածի՝ թիվ 1406 և 1408 էջերում առկա տվյալների, դասակարգվում են 9018 դիրքում գտնվող 9018 90, 9018 90 840 ծածկագրերով:

Ձեզ ենք ներկայացնում «Խաչապար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ տարածք ներմուծված «Հայելի գինեկոլոգիական» և «Ֆոլկմանի գդալ» անվանումներով մաքսային հայտարարագրերը, որոնք հավաստում և փաստում են, որ այդ ապրանքների մաքսազերծման ժամանակ «ԱԱՀ» հարկատեսակով հարկ չի հաշվարկվում և չի գանձվում:

բ) Համաձայն «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ Օրենքի հոդված 1-ով հաստատված ցանկի՝ 9018 ԱՏԳ ԱԱ ծածկագրին պատկանող ապրանքները՝ «9018 Սարքեր և հարմարանքներ՝ բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ կիրառվող (ներառյալ՝ սցինտիգրաֆիկական ապարատները), էլեկտրաբժշկական այլ ապարատուրաներ և սարքեր՝ տեսողությունը հետազոտելու համար», ապրանքները ՀՀ տարածք ներմուծման ժամանակ ազատված են ԱԱՀ վճարելուց:

գ) Համաձայն ՀՀ Կառավարության 2017թ. հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման Հավելված 3-րդի թիվ 5-րդ կետի 1-ին մասի՝

«Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության կիրառության նպատակով բժշկական տեխնիկային դասվում են՝

Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի դասակարգչի 9018, 9019, 9020, 9022, 9023, 9402 խմբերին դասվող բժշկական տեխնիկան»:

դ) Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝ 15-րդ հոդվածի սահմանման՝ «Հոդված 15. ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է»:

Այսինքն՝ Հրավերի թիվ 79 և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող՝ «Հայելի գինեկոլոգիական» և «Ֆոլկմանի գոլալ» անվանումներով ապրանքները ՀՀ տարածքում իրացնելիս իրավունք չկա դրանց համար «ԱԱՀ» հարկատեսակ հաշվարկել:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լրացուցիչ փաստացի և իրավական հիմքերն ու ապացույցները աներկբա կերպով փաստում և հաստատում են, որ «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի թիվ «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի որոշ մասնակիցների կողմից Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5, 7, 9, 10, 11, 12, 13, 50, 79 և 87-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար ներկայացված գնային առաջարկներում հաշվարկված և ներառված ԱԱՀ-ի մեծությունները չեն համապատասխանում ՀՀ-ում գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերի պահանջներին՝ այսինքն՝ հակասում են գործող ՀՀ Օրենսդրությանը»:

Ընկերությունը, ի լրումն բողոքի, 27.01.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Որպես «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի լրացուցիչ փաստացի հիմքեր ու ապացույցներ, Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ԱԱԾ-ի «ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-ԲՆԱ» ծածկագրով մրցույթին 2021թ. հունվարի 12-ին «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված թիվ 2՝ «Գնի առաջարկ»-ը, որտեղ տարբեր չափաբաժիններով առաջարկված են «ԳԲՔԱ-ՆԳ-2020/108» բողոքով բողոքարկվող մի շարք ապրանքներ, սակայն դրանց համար «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից առանձին տողով «ԱԱՀ» հարկատեսակ հաշվարկված չի, ի տարբերություն բողոքարկվող «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով մրցույթի Հրավերի տարբեր չափաբաժիններում առկա համանման ապրանքների՝

թիվ 5 - 8-րդ չափաբաժիններ – տարբեր չափսերի «Ներարկիչ»-ներ՝ (բողոքարկվող «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» մրցույթի Հրավերի թիվ 1, 2, 3, 4, 5 և 12-րդ չափաբաժիններ),

թիվ 10 - 11-րդ չափաբաժիններ – տարբեր չափսերի և տեսակների «Սպեղանի»-ներ՝ (բողոքարկվող «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» մրցույթի Հրավերի թիվ 50-րդ չափաբաժին),

թիվ 64-րդ չափաբաժին – «Դեղերի ներարկման համակարգեր»՝ (բողոքարկվող «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» մրցույթի Հրավերի թիվ 7-րդ չափաբաժին)»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:30-ին և 22.01.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.

«Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ բողոքի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն ԳԲԲԱ-ՆԳ-2020/108 բողոքի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.01.2020թ. ժամը 10:30-ին և 22.01.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Լեյկո» ՍՊԸ-ի կողմից 22.01.2021թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲԲԱ-ՆԳ-2020/108 բողոքի շրջանակներում իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Լեյկո» ՍՊԸ-ն ԳԲՔԱ-ՆԳ-2020/108 բողոքի քննության նպատակով 22.01.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով ներկայացրել է «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի ապրանքների ներմուծման հայտարարագրերը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/108 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/108 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել Ընթացակարգի թիվ 1-5-րդ, 7-րդ, 9-13-րդ, 50-րդ, 79-րդ և 87-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Լեյկո» ՍՊԸ-ն:

4. «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊ, «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊ և «Լեյկո» ՍՊ ընկերությունների կողմից, բողոքով վիճարկվող չափաբաժինների մասով, հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկներում նախատեսվել է ԱԱՀ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով (տեղեկագրում հրապարակված 29.12.2020թ.) արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը (հայտերում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

6. Նույն արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների գնային առաջարկները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչապար» ՍՊԸ-ի 29.12.2020թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով և լրացումներով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: **Հայտը ներառում է մասնակցի հաստատված գնային առաջարկը:**

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:** Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ,**

ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկադրեալի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

«Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից բողոք է ներկայացվել Ընթացակարգի թիվ 1-5-րդ, 7-րդ, 9-13-րդ, 50-րդ, 79-րդ և 87-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Լեյկո» ՍՊԸ-ն:

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊ, «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊ և «Լեյկո» ՍՊ ընկերությունների կողմից, բողոքով վիճարկվող չափաբաժինների մասով, հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրած գնային առաջարկներում նախատեսվել է ԱԱՀ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով (տեղեկագրում հրապարակված 29.12.2020թ.) արձանագրվել է, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը (հայտերում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Նույն արձանագրության 4-րդ կետի 4.1 ենթակետով արձանագրվել է, որ մասնակիցների գնային առաջարկները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Այսպիսով՝ «Խաչպար» ՍՊԸ-ն ԳԲԲԱ-ՆԳ-2020/108 բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի թիվ 1-5-րդ, 7-րդ, 9-13-րդ, 50-րդ, 79-րդ և 87-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած մասնակիցների կողմից «Ռետինե վիրաբուժական

ձեռնոցներ՝ ստերիլ, մեկանգամյա օգտագործման ռետինե ձեռնոցներ՝ ոչ ստերիլ, ներարկիչ, ներարկիչ ինսուլինի, ներարկիչ ասեղով, փոխներարկման համակարգ, թանգիֆ, սպեղանի կտորից, հայելի գինեկոլոգիական, ֆոլկմանի գդալ» ապրանքների համար ներկայացված գնային առաջարկներում նախատեսվել է ԱԱՀ, մինչդեռ տվյալ ապրանքները չեն հանդիսանում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ՝ ներկայացնելով համապատասխան իրավակարգավորումները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, բողոքի օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ԳԲԲԱ-ՆԳ-2020/108 բողոքի շրջանակներում 15.01.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի ընթացքում Պատվիրատուին պահանջ է ներկայացրել՝ ապահովելու բողոքով վիճարկվող չափաբաժինների մասով հայտեր ներկայացրած մասնակիցների կողմից գնային առաջարկներում ԱԱՀ նախատեսելու համար հիմնավորումները, ինչպես նաև՝ ապրանքների ներմուծման հայտարարագրերը:

Պատվիրատուն, ի պատասխան վերը նշված պահանջի, գրությամբ հայտնել է հետևյալը. «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի հիմքով նախաձեռնված թիվ ԳԲԲԱ-ՆԳ-2020/108 ծածկագրով բողոքի շրջանակներում «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի կողմից «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ 21/02» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊ, «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊ և «Լեյկո» ՍՊ ընկերություններից պահանջվել են բողոքում նշված և իրենց գնային առաջարկներում ներառված չափաբաժինների մասով ներմուծման հայտարարագրերը և ԱԱՀ-ով գնային առաջարկ ներկայացնելու վերաբերյալ դիրքորոշումները:

«Լեյկո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են ներմուծման հայտարարագրեր և դիրքորոշում, «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է միայն դիրքորոշում, «Ս.Ա.Վ. Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ոչինչ չի ներկայացվել: Ստացված բոլոր փաստաթղթերը էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրվել են Ձեզ»:

Այսպիսով՝ Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ **եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:**

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի

հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: **Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:** Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Վերը նշված նորմերով կարգավորվում է գնային առաջարկում ավելացված արժեքի հարկի նախատեսելը կամ չնախատեսելը՝ կախված նրանից, թե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, թե ոչ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Լեյկո» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկում ԱԱՀ նախատեսելու համար որպես հիմնավորում ներկայացված ապրանքների ներմուծման հայտարարագրերը՝ արձանագրում են, որ ներկայացված 2019-2020թթ. ապրանքների ներմուծման հայտարարագրերը ոչ թե «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների ներմուծման հայտարարագրերն են, այլ մեկ այլ ընկերության՝ «Լեյկոալեքս» ՍՊԸ-ի, որով չի հիմնավորվում, որ «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն տվյալ գործարքների գծով պետական բյուջե վճարել է ավելացված արժեքի հարկ:

Այսպիսով՝ արձանագրում են, որ «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊ, «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊ և «Լեյկո» ՍՊ ընկերությունների կողմից բողոքի քննության շրջանակներում չեն ներկայացվել այնպիսի հիմնավորումներ, որոնցով կփաստվեր, որ վերջիններս տվյալ գործարքների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել են ավելացված արժեքի հարկ, որպիսի պայմաններում նոր միայն հնարավոր կլիներ քննության առարկա դարձնել և արձանագրել «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊ, «Ս.Ա.Վ. ԳՐՈՒՊ» ՍՊ և «Լեյկո» ՍՊ ընկերությունների կողմից «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով իրենց կողմից ներկայացված գնային առաջարկներում ԱԱՀ նախատեսելու իրավաչափության հարցը:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում են, որ Ընկերության բողոքն ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 29.12.2020թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել «ԱԲԾ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգի թիվ 1-5-րդ, 7-րդ, 9-13-րդ, 50-րդ, 79-րդ և 87-րդ չափաբաժինների մասով ընդունել որոշում՝ 22.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության (տեղեկագրում հրապարակված 29.12.2020թ.) 3.1-րդ և 4.1-րդ կետերով կայացված որոշումները՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը և գնային առաջարկները հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին, դադարեցնելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ